



ԲԱԶՄԱՎԷՊ

Ի ՏԱՐԻ, ԹԻԻ 1

1862

ՅՈՒՆՈՒԱՐ 1

ԱԶԳԱՆԱՄ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Մարդկօրէն մտածելով՝ ներկայաբար յաւիտենականութեան մէջ ամենէն զարմանալի և նշանաւոր իրողութիւն և յեղափոխութիւնն է մարդկան երկրիս վրայ տնտեսութիւնն կամ քաղաքավարութիւնն : Չկայ քիչ շատ բարդաւաճ՝ քաղաք մը , յորում գլխաւոր առուլիսն կամ լրագրաց զրոյցն՝ ազգաց և իշխանաց կառավարութեան վրայօք չըլլայ : Եթէ պատմութեան ընթացքը քիչ մը բարձրէն քննելով դիտեմք , չեմք կրնար չտեսնել մարդկութիւնը իբրև անսահման ծովու վրայ տատանեալ , փնտռելով հաստատուն կէտ մը : Երկիրս ինքնին իբրև համաշխարհական նաւափայտ մը դիմէ յաւիտենական օթեվանի , զոր ումանք տգիտաբար նոյն իսկ երկրին վրայ կարծեն , որպէս թէ նաւահանգիստն այլ ի ծայր նաւուն կպած ըլլար : Ինչու զիւրաւ կու հասնէր այս նաւափայտս իր նպատակին , եթէ վրայի եղողքն միաբան ըլլային և ղեկավարքն

միշտ նկատէին զնշանս Լ'նոր՝ որ տուաւ “ և ի ծովու ճանապարհ , և ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր ” : Լայց ինչպէս առանձինն մարդ իր արարչադիր օրէնքը թողուց , այսպէս և մարդիկ իրենց համար սահմանեալ ընկերական օրէնքները . կիրք մըրկեցին զծով կենցաղական , երկնից նշանքն մթնեցան , միաբան նաւափայտն զարնուելով պէս պէս դժուարութեանց և հակառակութեանց՝ կոտորեցաւ . և ինչուան հիմա մէկ մէկ կտորի վրայ ապաւինեալ ազգք և լեզուք առանձնաբար ճամբայ կ'ընեն , երբեմն բոլորովին զատ , երբեմն դեռ քովէ քով . ոմանք փութան յառաջ , ոմանք տնտրնան յետամնաց . ոմանք հակառակին իրարու և վնասեն , ոմանք նախանձընդդէմ յառաջեն . ոմանք այլ կամ միշտ ուրիշներէ նեղուելով և կամ իրենց անհոգութեամբն ոչ միայն յետմնան , այլ և ալեկոծին , տագնապին և ծովակուկ'ըլլան . ինչպէս այն ազգերն՝ որոց անուանքն կան այսօր և ինքեանք

չկան 'ի միջի : Յիրաւի օտարներն ա-
նոնց փնաս հասուցեր են , այլ աւելի վը-
նասողն իրենք են եղած իրենց թոյլ
կամ ծուռ ղեկավարութեամբն , և ոչ
այնչափ ուրիշներն իրենց հակառակած
են որչափ իրենք այն վերին տեսչու-
թեանն , որ ինչպէս իւրաքանչիւր մար-
դու՝ առաւել ևս ամբողջ ազգի մը
կեալը և մնալը կամի և պահէ , ցոր-
չափ ազգն այլ իր կամացն գործակից
ըլլայ . ապա թէ ոչ՝ կրնայ իրաւամբ ը-
սել անոր « Կորուստ քո 'ի քէն է » :

Եթէ մարդիկ իրենց դիտմամբք քա-
ղաքավարին յերկրի , վերին տեսչու-
թիւնն այլ իր կանուխ և հաստատուն
դիտմունքն ունի իւրաքանչիւր ազգաց
վրայ , զորս հաւանեցաւ իրարմէ բաժ-
նելու . և « յորժամ բաժանեաց զազգս
» ամենայն , որպէս սփռեաց զորդիան Բ-
» դամայ , կացոյց սահմանս ազգաց ըստ
» թուոյ որդուց Բստուծոյ »¹ . և նոյն
ինքն յաւիտենական ափանց վրայ զա-
նազան իրարու մօտ կէտեր ուղղէ զա-
նոնք , զմանս շուտ՝ զմանս ուշ հաս-
ցնելով . և ինչպէս առանձին մարդկան
ոմանց վրայ մասնաւոր ինամբ մը ցու-
ցած է , այսպէս և ազգաց ոմանց : Ո՛վ
չի գիտեր Նրէից ազգին վրայ եղած ա-
ռանձնաշնորհութիւնն : Բայց եթէ
իւրաքանչիւր ազգ գոնէ իր պատմու-
թիւնը մանր քննէ , կրնայ ոչ սակաւ ա-
ռանձնաշնորհ դիպուածներ նշմարել ,
որոնց մէջ մարդկային քաղաքավարու-
թենէ վեր ուղղիչ մատ մի երևայ : Ս'եր
ազգին պատմական կենաց վրայ ինչ
ինամբ չեն երևար , թերևս աւելի քան
ուրիշ ազգաց , յետ Նրէից :

Եթէ չեմք ուզեր ըլլալ անշնորհք ,
անտեսք և անհոգք , պէտք է ճանչնամք
և խօստովանիմք որ ազգախնամ տեսչու-
թիւնն մեր ազգին վրայ այլ շատ յայտ-
նապէս և առանձնաշնորհութեամբ ե-
րևած է . մասնաւոր դիտմունք և ըն-
տրութիւն մի կայ Բստուծոյ մեր հայ-
րենեաց և ժողովրդեան վրայ : Բշխար-
հածանօթ և առակի պէս յայտնի է թէ
մարդոյ առաջին բնակութիւնն 'ի վերայ

1. Բ. Օրէնք , ԼԲ :

երկրի , և երկրորդն այլ յետ ջրհեղե-
ղին՝ եղան այն երկրին մէջ որ ապա կո-
չուեցաւ Նայաստան . յետ խառնակու-
թեան լեզուաց և բաժանման ազգաց
ըլլալով ժառանգութիւն յաբեթեանն
Նայկայ և հայրենիք զաւակաց նորա
Նայոց : Ի սկզբանէ մարդկութեան մին-
չև 3000 տարի , մինչև ցընտրութիւնն
Բքրահամու՝ նախահինամութեան դի-
տած կէտն յերկրի կ'երևի Նայաստան .
ամենայն ազգք անկից կու ճանաչեն
իրենց հին ծագումը , մանաւանդ հիւ-
սիսային և արևմտեան եռանդուն ա-
զնք . իսկ հարաւայնոց և արևելեաց
այլ սահմանագլուխքն մօտենան և զրե-
թէ սկսանին 'ի սահմանաց Նայաստա-
նի : Յետ բաժանման ազգաց և լե-
զուաց՝ մարդախնամ տեսչութիւնն ըլլա-
լով ազգախնամ , մինչև 2000 տարի
Նրէից վրայ յայտնապէս արթուն աչօք
կ'երևայ , ուրիշ ազգաց վրայ իբրև 'ի
քուն , իսկ Նայոց վրայ՝ հսկուն : Բն
երկհազարեան դարուն մէջ (Երբա-
համայ մինչև 'ի Սակաբէացիս և Եր-
բամայ ցԲշխունիս) Նայք պատմու-
թեան մէջ մեծ գործ կամ նշան մը
չեն թողուր . այլ բաւական բազմու-
թեամբ , զօրութեամբ և հարստու-
թեամբ աճեն զարգանան , ծանօթանան
և Բսիոյ տիեզերակալ պետութեանց
օգնական ըլլան . մինչև որ տեսչու-
թիւնն կու սկսի (եթէ ներելի է ըսել)
կամաց կամաց աչք գոցել Նրէից վրայ
և Նայոց վրայ բանալ : Վրիստոսէ ա-
ռաջ թ գարուն վերջերը Նրէից թա-
գաւորութեանց հարուածներն կու սկը-
սին , հարուածողքն այլ (հին Բսորե-
ստանեայք) կու պատուհասին . նոյն ա-
տեն Նայք առաջին անգամ կ'անցնին
'ի կարգ թագաւորութեանց Բսիոյ : —
Խորայեւացոյ տաճն ցեղից թագաւո-
րութիւնն կու վերջանայ և մասն մի գե-
րեաց 'ի Նայս վարին . դարձեալ գե-
րիչք պատուհասին (Սենեքերիմ) և
Նայք ինքնիշխան ազատ տէրութիւն
մի կ'ըլլան (իբրև 80 տարի) : — Յու-
դայի թագաւորութիւնն այլ կու վեր-
ջանայ , Նայոյ թագաւորութիւնն նոր

այսօր թուրքներն մը կ'առնու Նորաշէր
և խաբուզողոնսորայ բարեկամութեն,
և յետոյ Տիգրանայ և Արարոսի, մինչ
Նորայք բոլորովին 'ի գերութեան են.
երբ ազատին և դառնան յԱրուստղէմ
և սկսին նորոգել իրենց յիշատակնե-
րը, Նայք նորէն Պարսից իշխանու-
թեան տակ ընկնան, թէ և առանձին
թագաւոր ունենալով: — Երբ Նորայք
բոլորովին ազատութիւն և իշխանու-
թիւն կորսուցնցնեն յետ Սակաբէա-
յուց, Նայք որ նոյնպէս իրենց իշխա-
նութիւնը կորուսեր էին, կու սկսին
կանգնիլ: Բերաճամու սառայածին որ
դիքն անտես կու մնան. քետուրածին
որդիք կու սկսին դալ 'ի տեսութիւն.
անոնցմէ ծագի նոյն ատեն Բըշակունի
թագաւորութիւնն 'ի Նայս. ծանօթ
և պատկառելի կ'ըլլայ շրջակայ ազգաց,
և մինչև Հռովմէացւոց, որ ամենայն
ազգաց տիրելով՝ զՆայս այլ ստիպեն 'ի
հարկատուութիւն: Բայց հազիւ դա-
շինքը կնքուած, ամենախնամ տեսչու-
թիւնն նոր և հրաշալի և ամենամեծ
փոփոխութիւն մը կ'ընէ. մարդկան
բաղաբաւարութեան օրէնքը փոխէ և
օրինակն այլ ընծայէ իր իսկ մարդանա-
լովն, և դեռ իր տնօրէնութիւնը չի կա-
տարած՝ Նայ թագաւոր մը դաշնակից
կ'ըլլայ ամենաթագաւորին հետ. որ և
յետ կատարման տնօրէնութեանց և
ամենայաղթ դարձին յերկինս՝ նորա-
հրաշ ազգախնամ կամ հայրախնամ
տեսչութեամբ տնտեսէ զազգ մեր,
քրիստոնէական կրօնից կանուխ և հաս-
տատուն ծաւալմամբ. որոյ համար իր
առաքելոց և աշակերտաց խումբէն կու
դրկէ 'ի Նայս աւելի թուով քան յայլ
աշխարհս. և առաջին թագաւոր քրիս-
տոնէայ, առաջին թագուհի և վկայու-
հի ընծայէ 'ի Նայոց: — Թէպէտ և
քրիստոնէութիւն երեք դար կուռի և
հալածի 'ի հեթանոսութենէ, ինչպէս
ուրիշ տեղուանք, այսպէս և 'ի Նայս,
այլ քան զբազումս աւելի վկայիւք և
հետևողք պարծի հոն. և դարձեալ
մեծահրաշ տեսչութեամբ և զօրու-
թեամբ յառաջ քան զայլ՝ զՆայա-

ստան աշխարհ բոլորովին քրիստոնէայ
կ'ընէ, քիչ ժամանակի քիչ օրուան
մէջ 600 գաւառ մկրտութեան ցօղե-
լով լուալով և իբրև 20-30,000,000
մարդ վերածնանելով 'ի Նոգի սուրբ:
Տեսչութիւնն յառաջ քան զերեցընել
առ ինքնակալն Հռովմայեցւոց զու-
սաւոր իաջն, երեցուց առ հսկայ ար-
քայն Նայոց զՈւսաւորչին աջն. Տըր-
դատ որ հետևեցաւ Վիոկղետիանոսի
'ի հալածել զեկեղեցի, հետևեցուց ի-
րեն զբարեկամն իւր Սոստանդիանոս 'ի
հանգուցանել զեկեղեցի, և զմնացեալ
հալածիչս Սաքսիմինոս և Լիկիանէս՝
հալածեց վնասեց վերուց յարեւելից:
Տրդատայ և Վրիգորի գործակցու-
թեան երեսնամեակն՝ մեծ մտադրու-
թեան արժանի է. բոլոր աշխար-
հի մէջ փառաւոր դար մ'է, բոլոր
եկեղեցւոյ յաղթանակ և պարծանք
մ'է, իսկ Նայութեան և հայա-
խնամ տեսչութեան՝ բարձրագոյն կէտ:
Ընկէ ետև հազարամեան դարուկէս
(330-1830) երբ քրիստոնէութիւնն
յաղթանակած թագաւորէ յաշխար-
հի ազատութեամբ եկեղեցւոյ, ազգա-
խնամ տեսչութիւնն կ'ամփոփէ իր մաս-
նաւոր ճառագայթները մեզմէ, բայց
ոչ բոլորովին. Նայութիւնն կը նուազի
և նուազեալ է մինչև ցայսօր զանազան
պատահարօք և պատուհասօք. բայց ա-
մենայն մեծ վտանգի աստէն այլ փայլէն
ճառագայթք ինչ տեսչութեան, և ամ
պերու տակէն՝ բայց թափանցիկ ամ
պերու՝ կ'երևի աջն հայախնամ. որոյ
ամենէն մեծ նշան այս է, որ Նայաստան
գրեթէ ամենայն աշխարհէ աւելի հա-
լածանաց և աւերմանց ենթակայ ըլլա-
լով՝ անկորուստ պահէ զքրիստոնէու-
թիւն, զէզու և գրեթէ զմիագլխու-
թիւն եկեղեցական, որք 'ի բազմավը-
տանգ ժամանակս իրեն մեծ զօրութիւն
եղան և մեծագոյն բարւոյ առիթ թո-
ղուած են, եթէ գիտնայ զանոնք ուղ-
ղել և յարմարել ամենախնամ կամացն
Բոստանոյ, և ընդունելի օրինաց ժա-
մանակի:

Նիմա եթէ ուզեմք շուտ շուտ

աչք մը տալ այս միջոցիս զանազան յեղանակաց, կու տեսնեմք նախ դար մը թուլութեան արշակունի թագաւորաց (345-428) և անկարգ գնացից. այլ նոյն ատեն արիական և իմաստուն արթնութիւն Պաճաւունեաց, այսինքն Սուսաւորչի ցեղին և յաջորդացն կաթուղիկոսաց, որք արդարեւ հայրաքար խնամեն զազգն և պահեն ի պատուի. և երբ իրենց յաջորդութիւնն այլ դադրի (440), որով յետ թագաւորական հեղինակութեան Սուսաւորչին այլ կերպով մը վերցուի, և մեր ազգն՝ Պարսից ամենայն խորամանկութեանց և զրադէշտական կրօնից սպառնալեաց մատնուի, տեսչութիւնն մտաւոր ոյժ կու տայ հայոց՝ գիւտիւ գրոց և թարգմանութեամբ. որով դիւրանայ ժողովրդեան սովորիւ և հաստատիւ իր հաւատոց մէջ, և առաջնորդաց՝ պաշտպանել զնա ընդդէմ մոլորեցուցչաց. քաղաքական կորստեամբ թշուառագոյն դարն՝ դպրութեամբ նշանագոյն կ'ըլլայ քան զայլս: Երկու դար քչէ (440-650) Պարսից կեղակարծ տիրութիւնն. յորոց բոլորովին անկասկած մնալու հընարքն էր սերտ միաբանութիւնն հայոց ընդ Բիւզանդացիս, ինչպէս ի ժամանակս Տրդատայ և ոմանց ի յաջորդացն. բայց հայք զգուեալ անոնցմէ՝ Սարգանանեան պատերազմին ատեն օգնութիւն չգտնեցնուն համար, և նոյն ժամանակ եղած չորրորդ տիեզերական ժողովքին մէջ ալ չի գտուելով, փոյթ չեն ընէր և յեկեղեցականս միաբանիլ ընդ Յունաց, որով մնան մինչև հիմա ի նորանշան միայնութեան ընդ մնացորդաց արեւելեան ազգաց ոմանց. և ստիպուին երկու աշխարհակալ պետութեանց մէջ տատանիլ, երբեմն մէկուն երբեմն մէկայլին մօտենալով, և ոչ քիչ անգամ այլ դեռ իրենց հարց նիզակաւ օտար բռնութեանց դէմ դնելով: Արօնական միութիւնն և պրնդութիւն դեռ պահէ զիրենք կարծր նիզակի մը պէս, որ եթէ քիչ մ'այլ ճօճուն ըլլար՝ աւելի լաւ և փառօք պահէր ցայսօր և ասկէ ետեւ այլ: Սրե-

թէ նոյն ոգւով, նոյն քաջութեամբ, նոյն խորագիտութեամբ, և նոյն յամաւութեամբ կ'անցընէ հայաստան արաքական բռնութեան երկդարեան յեղանակն այլ (650-860). որ ատեն հին հայ ազնուականութեան գրեթէ կիսէն աւելին ջնջի կորսուի, բայց եկեղեցին հաստատութեամբ հաւատոց և բազմաթիւ վկաներով անսասան մնայ. շատ հեղ արտաքին զինուք այլ սլաշտպանի իր քաջաց մնացորդներէն, մանաւանդ ի ցեղէ Սամիկոնէից և Բազրատունեաց: Այս հոգի ցեղս գրեթէ սեփականէ ազգին հազարապետութիւնն կամ երեսփոխանութիւնն առաջի խալիփայից յ' Թաթարու. և անոնց բռնութեան տկարանալու ատեն՝ ինքն զօրանայ փառօք և իշխանութեամբ, և ի վարձ հաւատարմութեանն առ ազգն և առ եկեղեցին, հասնի թագաւորական աթոռոյ դար և կէս (886-1042). իր հետ ուրիշ ցեղեր այլ (Արծրունիք, Սիւնիք, Սանդագիք, և այլն), որոց բազմազխութիւնն՝ ազգային միաբան ոյժը նուազեցընէ, բայց ուրիշ կողմանէ աւելի կու տարածէ ոյժ և ծաղկումն, արուեստ և դպրութիւն ի զանազան իշխանաւիստ քաղաքս և մեծավիճակ վանորայս: Սինչև ի կէս Ժ. դարու և քիչ մ'այլ աւելի, դեռ հայաստան իր նախնի կերպարանքը, թէ և այլայլեալ, պահէ. անկէ ետեւ յարձակմամբ սկիւթական ազգաց, (մուրքաց և (մաթաւրաց, գրեթէ բոլորովին այլափոխի. օտարք կու բնակին և բազմանան իր մէջ, իր բնիկքն օտարանան յայլ աշխարհս. ոմանք հայրենի հողուն քաղցրութիւնը կամ օրէնքը անջինջ պահելով սրտերնուն մէջ՝ մնան հոն, ընդ բռնութեամբ նորեկաց. ոմանք ազգային ազատութիւնը վերադասելով քան զայն՝ կէս դաշնադրութեամբ և աւելի բռնաբարութեամբ դիմեն յարեւմուտս, և Տօրոսի ամուր լեռանց մէջ յասպահովեն իրենց նախնեաց գաւազանները, լեզուն, և Սուսաւորչոյ աթոռն այլ. և երեք դար հին հայոց

սահմանաճայրը, Վիւրիկիոյ մէջ, Ռու-
բինեան տէրութիւն մը կանգուն պա-
հէ Հայ ազգութիւնը. միջին դարու
պատմութեան մէջ նշանագոյն դիպաց
մէկն ըլլալով. և պատճառ մեծ ծանո-
թութեան և յարաբերութեան Հայոց
և բուն արեւմտեան տէրութեանց և
Հռովմայ երկիրիսան պետութեան հետ.
լատին և գաղղիացի լեզուք և սովո-
րոյթք մտնեն 'ի Հայս. Հայք դեսպա-
նութեամբ, ուխտագնացութեամբ, վա-
ճառականութեամբ յաճախեն 'ի նշա-
նաւոր քաղաքս Խտալիոյ և 'ի Թագա-
ւորանիստ տեղիս Եւրոպիոյ, մանաւանդ
խաչակիր զինուորութեանց ատեն: Լա-
տին վարդապետաց մուտքն 'ի Ս'եծ և
'ի Փոքր Հայս, և միտքանողաց անուա-
նեալ կրօնական կարգք, նոր դար մը
բանան Հայոց եկեղեցւոյն, որոյ արգա-
սիքն մնայ այնուհետեւ մինչև ցայժմ,
թէ և ոչ սակաւ հակառակութիւնք
ծագին այն պատճառաւ: Բայ կար-
ծեաց և տեսութեանց երկպառակու-
թիւնն, եւրոպական տէրութեանց առ-
տին զբաղանքն՝ անօգնական և միայ-
նակ թողուն զԹագաւորն Վիւրիկիոյ, և
յետին Հայկական գաւազանն այլ կո-
տրի 'ի վերջս ժ'Դ դարու. յոր ժամա-
նակ Ս'եծ Հայք այլ, արդէն նուազած
Խաթարաց բռնաբարութեամբ, Լէնկ
Թիմուրի ասպատակութեամբքն բոլո-
րովին անշքանան. և դարձեալ նոր գաղ-
թականք թողլով զբնիկ երկիրն՝ անց-
նին Եւրոպա. որոց սերունդք մնան
մինչև հիմա 'ի Ռուսաստան, Լեհա-
ստան, Ս'աւստոստան, և Վանուբեան
գաւառաց մէջ, ուր հանդարտութեամբ
ծաղկելով և հարստանալով՝ կրնան ի-
րենց ազգակցաց և մանաւանդ եկեղե-
ցական աթոռոյն օգնել, նաեւ ժե' և ժ'Զ
դարուց մէջ, որք մեր պատմութեան
մէջ ամենէն աննշան, մթին և լուռն
են. միայն նոր վկայից նահատակու-
թիւնն 'ի Վուրդ, Խուրքմէն և Վար-
սիկ բռնաւորաց՝ անշէջ պահէ կրօնա-
կան կրակը: Եւ որ ցնցմունք և նորու-
թիւն մ'այլ տան 'ի կէս ժե' դարու մէկ
մի Փլորենտեան ժողովոյն մէջ միաբա-

նութիւնն կաթողիկոսին Սոյ, մէկ
մ'այլ կաթողիկոսութեան երկու բա-
ժանին և գլխաւոր աթոռ ըլլալն Եւ-
միածնի: Սակայն երկուքն այլ մեծ
կամ յայտնի հետեանք մը չեն ունե-
նար, ազգին անհաստատ և բաժանեալ
քաղաքական վիճակին համար. որ 'ի
վերջ ժ'Զ դարու և 'ի սկիզբն ժե'ն ա-
ւելի կանոնաւոր կերպ մը կ'առնու,
Հայաստանի երկու ձեւացեալ տէրու-
թեանց (()) մանեանց և Վարսից) մէջ
բաժնուելովն, որք ինքնագլուխ բռնա-
ւորաց մանր իշխանութիւնները վերցը-
նեն: Եւնոց հետ Հայք այլ բոլորովին
իրենց քաղաքական ինքնագլխութիւնը
կորուսած ատեննին՝ նոր այցելութիւն
մի կ'ունենան մտաւոր. ուսմանց և կրօ-
նական կարգաց նորոգութիւն կ'ըլլայ 'ի
զանազան կողմանս և վանորայս. և
յառաջ քան զայլ արեւելեայս Հայք
հնարին զտպագրութիւն գրոյց, որոյ օ-
գուաները տեսնային Եւրոպա, վա-
ճառականութեամբ հոն գալով կամ
բնակելով: Հին թուղա շահաստանին
աւերն և փոխադրութիւնն 'ի Վորն
թուղա Սպահանու, և ընդ Ս'ենետիոյ
անընդհատ առեւտրութիւնն, այս գե-
ղեցիկ արուեստին յաջողութիւնը դի-
րացնեն, և գրեթէ ամէն եւրոպական
վաճառատեղ քաղաքներ մէկմէկ հայ
տղապարտուն կանգնի, ուսկից ապա և
'ի բուն Հայոց սահմաններն այլ բե-
րուի, 'ի Ռոստանդնուպօլիս, 'ի Եւրո-
ղա, Եւմիածին, Եւրոսաղէմ, և այլն:
'Եւնոց ատեն Լատին վարդապետք և նոր
միանձունք դարձեալ սկսին յաճախել
'ի Հայս, և Հայք կրնան ընդհանրա-
կան եկեղեցւոյ սերտ միաբան ըլլալով
'ի հաւատս՝ պահել իրենց ազգային
լեզուն, ծէսն և օրէնքներն: Բայ բանս
աւելի հաստատ և պայծառ կու հուշա-
կէ ժե' դարուն սկիզբը Ս'եբաստացի
քաջահաւատ վարդապետ մը, Ս'իւի-
թար, միաբանակեցաց ընկերութեամ-
բ, զոր հաստատէ ազգին 500 տարուը-
նէ վեր ծանօթ, դաշնակից և վաճա-
ռակից Ս'ենետիոյ սահմանաց մէջ.
Ճշմարտութիւն կրօնական, կրթու-

Թիւն բանական կամ ուսմունք, և ոգի ազգային, այս ընկերութեան նպատակն կու ճանաչուին, պատուին, պտղաբերեն. նոր յարգ և ծանօթութիւն մ'այլ կ'ունենան Հայք առ Եւրոպէացիս, և ամենայն միտք աննախանձ վկայէ որ ազգախնամ տեսչութեան մեծ այցելութիւն մ'է այդ, և նոր կապ ու խառնուրդ մը համաշխարհական դպրութեան ընդ հայկականին. որոյ օգնական կ'ըլլան այս դարուս մէջ բացուած ազգային վարժարանք, տպագրատունք, օրագիրք ևս՝ եթէ քիչ բանակուի և աւելի մտաշահ ծանօթութիւններ հրատարակեն:

Վարուս երկրորդ քառորդին մէջ հանդիպած քաղաքական յեղափոխութիւնք յարեւել, ամենէն աւելի Հայ ազգին վրայ ներգործած են, (ի բաց առեալ զազատ տէրութիւնն Ռուսաց). Ռուսաց պատերազմներովն ընդ Վարսս և (Սմանեանս) Հայաստանի կէսն յետ վեց և եօթն դարուց՝ կ'անցնի ի ձեռս քրիստոնեայ իշխանութեան. ազգն նոր իշխող մ'այլ կ'ունենայ, իր կրօնական գլուխն այլ անոր հպատակի. մինչև ցայն ժամ իր արտաքին իրաւասացութեան ներքեւ եղող՝ այլ դաւանութեամբ տարբերեալ մասն ազգին՝ բոլորովին կու բաժնուի, և զատ աթոռ կ'ունենայ և զատ երեսփոխան քաղաքական. յորմէ, որպէս ամենայն բաժանմամբ, ազգին ընդհանրութեան ոյժն նուազի, այլ մասունքն աւելի կրնան զօրանալ ազատ և անարգել զարգացմամբ: (Սմանեան պետութեան նոր օրինադրութիւնն կ'արթունցնէ ժողովրդոց և հասարակաց իրաւունքն, և փոխէ ստրկաբար ծառայութիւնը յազնուական հպատակութիւն: Այս զգացումն խառնուելով քսան տարուան ուսմանց մտավարժութեան հետ՝ կ'իմացունեն որ ազգային ոգին զարգացեալ չի կրնար երեսայի պէս խանձարրապատմնալ, բայց դեռ ոչ այլ իր հսկայաձև նախնեաց մեծ մեծ զգեստները հագնիլ, և ոչ այլ վրան առնուլ ամենայն նորաձեւութիւն հիմու ազգաց: ...

Այսին յայտնի է. հասակին համեմատ զգեստն յարմարցնել, այս է մեծ խնդիրն, որ դարուս կիսէն ետքը ինչուան հիմա ազգիս երկու կրօնաբար բաժանեալ մասերն այլ իրենց մէջ շարժէ և շփոթէ. ամենուն ծանօթեն, որպիսի դիպուածներով... Վաւանակին ընդհանուր քաղաքական ներկայ շարժումն այլ, պատերազմունք և փոփոխութիւնք պետութեանց՝ քիչ շատ ազդեցութիւն կ'ընեն այդ մեր ազգային շարժման կամ տատանման, որ դեռ ի յուզման է:

Նանրակշիռ յեղանակի մը մէջ կամ սկիզբն եմք. որ ոմանց շատ վտանգաւոր կ'երևի, իբրեւ թէ ազգին ոյժն և ճարն հատեր է. իր կեցուցիչ, յառաջեցուցիչ մեքենայն խորտակեր է. չունի իր ողջութեան անդամներն: ...

Ար է ազգախնամ տեսչութիւնն. յետ քառասուն և չորս դարուց մի թէ սպառեցաւ հայութեան լապտերին լուսավառ նիւթն. եթէ այդպէս է, քար ի գլուխ կ'սպած երթանք ժամանակին անդարձ անդնդոց մէջ զահալի ժինք, նման այն ազգաց որ երբեմն մեր աշխարհին չորս կողմերն անուն և տէրութիւն ունէին, և այսօր չկան անձամբ, այլ միայն չոր քարերով: ... Բայց մեր աշխարհն դեռ իր անուամբն կոչի և կայ, և իր ժողովուրդն ցրուած՝ բայց դեռ ազգ է, թուով, լեզուաւ, ծիսիւ և զգացմամբ. — ուրեմն ազգախնամ տեսչութիւնն հսկէ անոր վերայ: Ի թէ տատանեալ և կոծեալ ծովուն ալեաց վրայ այլ շատ հեղճի ծագեր արեգակն, և անոնց շփոթած փոփոխներն անգամ մարգարտանման գեղեցկացնեն, և դարձեալ միատարր բիւրեղի նման հաւասարեցնեն. գիշերն իսկ՝ լուսին նշան է խաղաղութեան մրկաց, և հեռաւոր միայնակ աստղիկ մ'այլ՝ յոյս ապագայ հանդարտութեան. և եթէ երկինք երկիր այլ մթնցած՝ չերևան, մագնիսոտ ասեղիկ մի այն ընդհանուր կուրութեան և կորստեան մէջ՝ իր ցուրտ ծոցէն կրնայ անկշռելի կրակով մը զօրութեամբ մը

փնտռել գտնել իր դիտած կէտը , իր զարմանալի սիրելին . . . Ո՛վ տատանեալք , կանգ առէք պահ մը եղած տեղերնիդ . ծանօթարար լոյս մը ծագէ հանդարտեալ միտքն . նախ ինքզինքը ճանչնայ մարդ , ապա զընկերս : Ճանչնանք զմեզ , և մեզի պատշաճեալ տեղը և գործը յանձն առնունք . ճանչնանք զիրար , և իւրաքանչիւրին պատշաճեալ տեղը և գործը տանք . նաւն կուսկսի շիտակիլ , ճամբան կ'որոշուի , նաւահանգիստն ճանաչուի , ազգախնամ տեսչութիւնն պայծառանայ , հայութիւնն ապահովի իր յաւիտենական ընթացից և նպատակին մէջ : . . . Հաւասարակաց հանդարտութիւն և համբերութիւն . և իւրաքանչիւրոց՝ մտադրութիւն իրենց յատուկ վիճակին պարտուց և պատշաճից . ոչ զիրար խափանել , և ոչ չափէն վեր նետուիլ : Ամենայն յառաջընթացութիւն նախկին յետմնացութիւնը ունի . պէտք է մէկիկ մէկիկ այն քայլերը ընել . ոչ արտորանքն փութացընէ , այլ շրջահալեաց զգուշութիւնն : Այս զգուշութիւն և ջանքս միայն կրնայ գործակից ըլլալ հայախնամ վերին տեսչութեան , և իր ծածկեալ բարիքները յայտնել ՚ի վայելա ազգիս և ՚ի զարմանս օտարաց . իսկ անզգուշութիւնն կրնայ այլ աւելի ծածկել և ուշացընել , և ինչուան խափանել ցանկալի յայտնութիւն մ'այլ , յետ այնքան յայտնութեանց կամ իննամոց՝ որք կատարուեր են հինգ հազար տարի նահապետեալ ազգի մը քաղաքական տնտեսութեան զանազան յեղանակաց մէջ : Ահա հսկէ հին հայախնամ տեսչութիւնն , այլ իր դիտմունքն սուրբ և բարձր է . միայն ազնւական դիտմամբ և ջանիւք կրնայ ազգն արդիւնաւորիլ նոր այցելութեան և յապահովել ընթացքը առ կէտն երջանիկ :

Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

Հին Քնար

Հայկական նախնի և հնագոյն քնարն կամ բամբիւն որ երգէր զՆոյ , զԹորգոմազինս , զՀայկն , զՏիգրան , զԱհաբն , զՎատերազմն Սարաց , զԱրաքսն Սմբատ , և այլն , վաղուց լուր և կորեր է . հազիւ քանի մի տողք , քանի մի վանդք են մնացեր . որոնցմէ աւելի զօրաւոր նշան մեր հին ծաղկեալ ընդարձակ բանաստեղծութեան է անհուն հարստութիւն և տէրապիտութիւն բառից և ոճոյ լեզուիս : Արկրագնտիս կազմակերպութեան նման՝ հին խաւ մը կամ երես մը անցեր է , և թերեւ ոչ մէկ , այլ երկու իրեք այլ , մինչև հիմակուան երեսն ձեւացեր է . որուն մէջ առջիններուն հետքն և ինչ ինչ մնացորդ երեւան , որպէս բրածոյ շխարք նախադարեան կենդանեաց : Վրիստոնէական կազմածն ծածկեր է հեթանոսական Հայոց հիւսուածները . նոր դպրութիւն , նոր երգարան մը կէս հայ կէս յոյն լարերով՝ փոխեր է արարատեան արձագանգները . բայց յետ 1400ամեան դարու մը՝ այդ մեր երկրորդ նախնեաց , մեսրոպեան երգչաց լեզուն այլ ծածկուելու փոխուելու վրայ է , և արդէն փոխեալ լռեալ կ'ըլլար , եթէ եկեղեցական անընդհատ պաշտամունքն և ուսմանց նորագիւծն անարատ չպահէին անոնց սրբազան վաստակը . Շարականը , Տաղը , Սեղեգիք , Ացուրդք , Վանձք , և այլն , որոց մէջ ծանօթագոյն և ընտրելագոյն են առաջինքն . որովք կրնայ միշտ մեր եկեղեցին և դպրութիւնն անամօթ և բարձրագլուխ կենալ որ և է ազգաց տաճարաց մէջ :

Ահա այս երգերն են , արձակ կամ ոտանաւոր , զոր անուանեմք Հին Քնար , ՚ի զանազանութիւն յետին դարու և ռամկորէն երգոց , զոր հարկ է անուանել Նոր Քնար , իսկ հիմակուան և կենդանի քերդողաց գրուածքը Ներկայ Քնար :

Այս անգամ հրատարակելիքս՝ Հին Վրնարին մէկ աննման արտադրութիւնն է , որ յիշեալ տեսակ տեսակ երգոց ոչ